ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՇԱԽՄԱՏԻ ՄՐՑԱՇԱՐ ԵՎ ԽԱՂ ՍԵԱՆՍ ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐՆԵՐԻ ՀԵՏ

16.04.2018 09:14

2018 թվականի ապրիլի 14-ին Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում փաստաբանների միջև անց է կացվել շախմատի մրցաշար:

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը, ողջունելով խաղի մասնակիցներին, նշել է, որ փաստաբանների պալատում պարբերաբար անց են կացվում շախմատի մրցաշարեր և փաստաբանների հետաքրքրությունը մեծ է այս սպորտաձևի հանդեպ: Նա նկատել է, որ շախմատը միակ մարզաձևն է, որտեղ բացառվում է բախտը բերելու գործոնը և սպորտսմենն ապավինում է միայն սեփական ինտելեկտին:

Մրցաշարը հանդիսավոր բացել, փաստաբաններին հաջողություն և լավ խաղ է մաղթել սպորտի վարպետ, շախմատիստուհի Արիանա Կաոլին:

Մրցաշարին աջակցել և համաժամանակյա խաղ են անցկացրել գրոսմայստերներ, օլիմպիական, Եվրոպայի և մի շարք այլ հեղինակավոր մրցաշարերի հաղթողներ, բազմակի չեմպիոններ Արտաշես Մինասյանն ու Գաբրիել Սարգսյանը:

Մրցաշարին մասնակցել է 37 փաստաբան: Այն անց է կացվել 7 պլյուս 5 վայրկյան հավելումով: Անց է կացվել 7 խաղափուլով՝ շվեյցարական մրցակարգով:

Առաջին մրցանակակիր է ճանաչվել Կարեն Մեժլումյանը (արտ.1844), երկրորդ պատվավոր տեղը զբաղեցրել է Սերգեյ Ամիրխանյանը, երրորդ տեղը գրավել է Աշոտ Շահմուրադյանը:

Առաջնությունը վարել է միջազգային կարգի մրցավար Վահագն Խաչատրյանը:

Մրցաշարի կազմակերպվել էր՝ Պալատի մարզամշակութային ակումբի համակարգող Վրեժ Խաչիկյանի ջանքերով:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })